



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

02.05.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-ԳԲԽ-26/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.06.2015թ. թիվ 1/73-1/15608-15 և 14.07.2016թ. թիվ 04/6907-16 գրություններով ներկայացված «Կարենօիլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04720098) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-26/17 բողոք), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), ՀՀ ԿԱ ոստիկանության 12.06.2015թ. թիվ 4/488 գրությունը և կից փաստաթղթերը, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության 12.06.2015թ. թիվ 4/488 գրության հիման վրա, 17.06.2015թ. թիվ 1/73-1/15608-15 գրությամբ՝ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կարենօիլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և

այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ԿԱ ոստիկանությունը 12.06.2015թ. թիվ 4/488 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-15/6/ՎՔՆ» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 05.04.2016թ. թիվ 01/04.1/1368-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 17.06.2015թ. թիվ 1/73-1/15608-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է՝ «Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Կենտրոնը միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (21.05.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Կարենօիլ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. թիվ 04/6907-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Հայջրմուկոյուդի» ՓԲԸ-ն 08.07.2016թ. թիվ ՆԳ1-04/1474 գրության համաձայն՝ վերջինիս կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգին «Կարենօիլ» ՍՊԸ-ն 29.05.2015թ.-ին մասնակցության հայտ է ներկայացրել:

2. «Կարենօիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ընկերությունը 07.04.2017թ. թիվ 09/3344-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ տեղի է ունեցել թուրիմացություն և ընկերությունը տեղյակ չի եղել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացության մասին:

Ընկերությունը՝ Կենտրոնին տեղեկացրել է, որ հայտը ներկայացնելու օրը ունեցել է 920.000 ՀՀ դրամի գերավճար և խնդրել է տրամադրել լրացուցիչ ժամանակ, որպեսզի ներկայացնի ապացույց՝ պարտք չունենալու վերաբերյալ:

Որից հետո անցել է բավականին ժամանակ և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 16.03.2017թ-ի գրությունը ստանալուց հետո միայն **gnumner.am** կայքում տեղադրված դեղին ցուցակում տեսել են Ընկերության անունը, որտեղ խախտման օր նշվել է 21.05.2015թ., իսկ ժամկետի ավարտ 21.05.2016թ.:

Ընկերությունը գրությանը կից ներկայացնել է՝ Էջմիածնի տարածքային հարկային տեսչության 24.02.2016թ. թիվ 2-8/3-205 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը առ 21.05.2015թ դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի՝ հիմք Էջմիածնի ՏՀՏ 24.02.2016թ-ի թիվ 2-8/3-205 տեղեկանքը:

3. ՀՀ ԿԱ ոստիկանության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը:

ՀՀ ԿԱ ոստիկանությունը 12.06.2015թ. թիվ 4/488 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-15/6/ՎՔՆ» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-20/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 17.06.2015թ. թիվ 1/73-1/15608-15 և 14.07.2016թ. թիվ 04/6907-16 գրություններով ներկայացված «Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Կարենօիլ» ՍՊԸ-ն 21.05.2015թ-ին մասնակցել է ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար կազմակերպած «ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-15/6/ՎՔՆ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին:

2. Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով՝ 04.06.2015թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած

մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 11.06.2015թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Կարենօիլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու **(21.05.2015թ.)** օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ **356,473 ՀՀ դրամ**:

4. ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.06.2015թ. թիվ 1/73-1/15608-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Կարենօիլ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու գործընթաց:

5. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում Կենտրոնը 05.04.2016թ. թիվ 01/04.1/1368-16 եզրակացությամբ արձանագրել է, որ «Կարենօիլ» ՍՊԸ-ի կողմից 21.05.2015թ հայտի 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

6. «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ն 08.07.2016թ. թիվ ՆԳ1-04/1474 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ «Կարենօիլ» ՍՊԸ-ն 29.05.2015թ.-ին հայտ է ներկայացրել «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-15/24» ծածկագրով գնման ընթացակարգին:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. թիվ 04/6907-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի երկրորդ ենթակետը՝ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

8. Ընկերությունը 07.04.2017թ-ի գրությանը կից ներկայացնել է՝ Էջմիածնի տարածքային հարկային տեսչության 24.02.2016թ. թիվ 2-8/3-205 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը առ 21.05.2015թ դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի՝ հիմք Էջմիածնի ՏՀՏ 24.02.2016թ-ի թիվ 2-8/3-205 տեղեկանքը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նույն Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

«Կարենօիլ» ՍՊԸ-ն 21.05.2015թ-ին մասնակցել է ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար կազմակերպած «ՀՀ ԿԱ ՈՋ ՇՀԱՊՁԲ-15/6/ՎՔՆ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով՝ 04.06.2015թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 11.06.2015թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Կարենօիլ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (21.05.2015թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ **356,473 ՀՀ դրամ**:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.06.2015թ. թիվ 1/73-1/15608-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է սահմանված կարգով նախաձեռնել «Կարենօիլ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու գործընթաց:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում Կենտրոնը 05.04.2016թ. թիվ 01/04.1/1368-16 եզրակացությամբ արձանագրել է, որ «Կարենօիլ» ՍՊԸ-ի կողմից 21.05.2015թ հայտի 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

«Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ն 08.07.2016թ. թիվ ՆԳ1-04/1474 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ «Կարենօիլ» ՍՊԸ-ն 29.05.2015թ.-ին հայտ է ներկայացրել «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀՀԳՆԶՏՊԿ-ՀԶԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/6-15/24» ծածկագրով գնման ընթացակարգին:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. թիվ 04/6907-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի երկրորդ ենթակետը՝ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Ընկերությունը 07.04.2017թ-ին Խորհրդին է ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Էջմիածնի տարածքային հարկային տեսչության կողմից տրամադրած 24.02.2016թ. թիվ 2-8/3-205 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը առ 21.05.2015թ դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի՝ հիմք Էջմիածնի ՏՀՏ 24.02.2016թ-ի թիվ 2-8/3-205 տեղեկանքը:

Այսպիսով, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Էջմիածնի տարածքային հարկային տեսչության կողմից տրամադրած 24.02.2016թ-ի թիվ 2-8/3-205 տեղեկանքի պարզ է դառնում, որ «ՀՀ ԿԱ ՈՁ ՇՀԱՊՁԲ-15/6/ՎՔՆ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի իրավերով պահանջվող որակավորման պահանջներին՝ Ընկերության կողմից 21.05.2015թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածը՝ չի հանդիսանում Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով՝
ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության 14.07.2016թ. թիվ 04/6907-16 գրությամբ ներկայացված «Կարենօիլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04720098) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել և «Կարենօիլ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:


Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Գևորգ Հայրապետյան

Անդամ՝



Հայկ Կոչեցյան